որով յայտնէ, թէ (զոնէ) Վիշապի օգուտները կու քաղէր զերբէ մի կամ կ'ուզէր քաղել, բայց չի գտաւ այն գիրքը։

Այս ցեղ կենդանեաց յետ Վիշապին իր ազգակիցն գրուած է՝ (ե), Օձ. որոյ քանի մի լեզուաւ անուանքն այլ գրէ. «Ֆռանգերէն՝ Սերպի (Serpent), Արաբ. Հայիյէ, «Ֆարսի՝ Մար, Թուրք՝ Իլան։ Խելացի «անասուն է և խորագէտ, և վախկոտ է. «պատրաստութեամբ կու կենայ»։ Երկայն ստորագրէ օձին բնութիւնն և օգուտներն, բարոյական խրատներ այլ խառնելով. ի (զ) կենդանին թուրք. Սքուրք գրէ, բայց ի ստորագրութեանն՝ Լքուռն. փոքր ճանճ մ'է. առաւել «տաքութենէ կու լինի, և այնով կու «անցանի տաքութիւն ամառան. զի առաւել «աղտոտութենէ ոջիլ կու լինի. և առաւել «տաքութենէ հողն կու չորանայ՝ լու կու «լինի. և օրն որ առաւել ջերմանայ՝ ճանճ «և Լֆու կու լինի», և այլն։ Յետոյ խօսի ճանճի, Լուի և նմանեաց վրայ։ — (է), Քեղեր. ի լուսանցսն գրէ. «Քերդեանքէղ այլ «ասէ». զոր մենք հայերէն Մողէս կոչեմք։ — (ը). Լու. թուրք, փիրէ։

(թ). Մժեժիս. թրք. Սիվրի սինեկ։ Աբրահամ միշտ այսպէս գրէ Մժեղ գրուելին. — (ժ). Մարախ. թրք. Զէքիրկէ։ — (ժա). Կարիճ թրք. Ագռակ։ — (ժբ). «Մրուչեմ «(Մրջիւն). թրք. Քարրանձէ. բնութիւն, ա«զահ է, աչքն չի կշտանար, ժողովէ և «ամպարէ։ Զարմանք այս է՝ որ տարին «երկու հատ ցորեն կ'ուտէ. տես, որ յա«զահութենէն՝ իւրմէն մեծ իրք կու առ«նու ի բերանն։ Մուչրման կեանք քիչ է, «տարի մի այլ չի լինիր. զհողն՝ որպէս «դարպաս կու շինէ, վերնատուն, սրահ և «քունճեր, բարձր և ցած. և անդ կու ամ«պարէ զամենայն, կարգով կու շարէ, և ի «վերայ (մէկ) մէկի դիզէ, մինչեւ որ մարդս «տեսանէ՝ ճանաչայ։ Եթէ մուչէմ մի որ «յուլութիւն անէ և հետ իւրեանց չի գայ «աշխատի, ծանր իրքնին բառնալ կու տան. «և թէ փախչի և չի գայ հետ իւրեանց աշ«խատիլ, ժողովին՝ և զնա խածանելով «սպանանեն։ Եւ զցորեանն որ կու ժողո«վեն և ամպարեն, երկու կու կիսեն որ չի «ծրլի և չբուսանի. և զրակլային կուճեպն կու «հանեն և տոր տոր կու անեն։ Եւ զար«ձեալ, եթէ հութ (հիւթ) քաշէ՝ զժողովածն «հանեն ի յարեւն և չորցրնեն, և այլվի պա«հեն. և յորժամ որ ամպ լինի՝ շուտով կու «ժողովեն՝ որ անձրեւ չի հասանէ, և ի բունն «կու կրեն շուտով»։ — Յետ քանի մի օգուտն յիշելու, վերջացընէ այսպէս. «Եւ թէ «զհաւկիթն՝ ի մէջ ժողովոց ցանես, ցրուին «և չի միաբանին, և բաժանին»։ Շատ պարզ, զօրաւոր և ամուր ղեղ՝ մարդկային ընկերութեան մեծագոյն չարեաց, եթէ ստոյգ ըլլար։

Յետ այս մանրիկ կենդանեաց՝ կարգէ Աբրահամ զԱյլակերպս, որք «չեն նման «ամենայն անդամք նոցա՝ Ադամորդոյն». և նախ գնէ զԱռուռ և Մաառռ, որ են Գոլզ և Մագոգ, ըստ Ս. Գրոց, և ի մերոց և յօտար արեւելեայ պատմչաց պէսպէս ազասպելեալ հիւսիսաբնակ ազգք են ի Կովկաս, Դարբանայ լերանց պահակին քովերը։ — «Այլակերպք շատք են, բայց սակաւ մի «պատմեցից փոքր ի շատէ, Աստուածով»։ Զայս ըսելով, գրէ «Թ. Մենանք. Սոքա այլ «ազգ մի են. ի մէջ աւազին բնակեալ են, «Լֆուռ և Մէնուռ մօտ են, քան զսոսա «մօտ մեզ. այսոք ֆիլի նման ականջ ունին. «մէկ ականջն ներքեւն կու փակին և մէկ «ականջն վրաներն կու ծածկեն. զինչ ա«նուն (?) կղզի մի կայ՝ անդ կու բնակին «ի մէջ աւազին, մօտ ի Զին. և սոցա «երեսքն՝ շան նման են, այլ անդամքն՝ «մարդոյն կու նմանին». և այլն։ Այս կերպով քանի մի ազգեր այլ ստորագրէ համառօտ. որոց՝ «զ, ազգ մի այլ կայ՝ որ Ղէսնաւ «ասեն. կէսն մարդուն կերպարանք ունին, «կէս գլուխ, ձեռքն մէկ, ոտքն մէկ. մարդ «մի որ կիսես՝ անոր նմանի. այնպէս վազեն, «մարդոյ պէս կու գրուցեն Եէմենու աշ«խարհն կու լինի»։

ը. Ութերորդ այլակերպն «Օձ պիհուռնուռք»? թուի Ս. Գրոց մէջ յիշուած Ովգ հսկայն Բասանու, որոյ երկաթի գահոյքն կամ անկողինն՝ ինն կանգուն երկայն էր, հսկայից կանգնով, չորս կանգուն լայն (Բ, Օրէնք, Գ, 11). իսկ Աբրահամ և ուսկից որ ինքն